

## ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ N 235-Ա

6 օգոստոսի, 2020 թվական

### ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի №298-Ն որոշման 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով և որոշման հավելվածի 20-րդ կետով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի հուլիսի 14-ի N 1824-Ա, N 1836-Ա, 2020 թվականի հուլիսի 16-ի N 1873-Ա, 2020 թվականի հուլիսի 17-ի N 1878-Ա, 2020 թվականի հուլիսի 31-ի N 1923-Ա հրամանների հիման վրա 2020 թվականի օգոստոսի 2-5-ին իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝

1. 24 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի (հասցեներում իրականացվող) գործունեության ծավալումը՝
  - 1) «Ռաֆֆի Հակոբյան» Ա/Ձ՝ ք. Մեծամոր, Կոմունալ գոտի 27.
  - 2) «Ժաննետա Երեմյան» Ա/Ձ՝ Տափերական համայնք, Տարոնի 14.
  - 3) «Կամար» ՓԲԸ՝ ք. Աշտարակ, Սիսակյան 16.
  - 4) «Արիս Քարամյան» Ա/Ձ՝ ք. Արտաշատ, Մարքսի 19Բ.
  - 5) Երևանի քաղաքի Էրեբունի վարչական շրջան՝ ք. Երևան, Սասունցի Դավիթ 87:
2. 24 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի (հասցեներում իրականացվող) կողմից անձանց ընդունելությունը.
  - 1) «Արտատ Գրուպ» ՍՊԸ՝ ք. Ծաղկաձոր, Տանձաղբյուր 15.
  - 2) «Նյու Հորիզոն Գրուպ ԻՆԿ» Ծաղկաձորի գլխավոր մարզահամալիր՝ ք. Ծաղկաձոր, Չարենցի 1.
  - 3) «Էլեգանտ Ռեսորտ» ՍՊԸ՝ ք. Ծաղկաձոր, Տանձաղբյուր 11.
  - 4) «Էյջայտուր» ՍՊԸ՝ ք. Ծաղկաձոր, Վ. Հարությունյան 13.
  - 5) «Սուսաննա Սոխակյան» Ա/Ձ՝ Ալավերդի համայնք, Ջրավազանի 5ա.
  - 6) «Էդմոնդ Խաչատրյան» Ա/Ձ՝ Իջևան համայնք, Մետաղագործների խճ.22.

7) «Բագրատյան Մանվել» Ա/Ձ՝ ք. Ծաղկաձոր, Վ. Հարությունյանի 7.

8) «Նորայր Վիրաբյան» Ա/Ձ՝ ք. Ծաղկաձոր, Սարալանջի 3.

9) «Սիալիա» ՍՊԸ՝ ք. Ծաղկաձոր, Վլադիմիր Հարությունյան 8.

10) «Վաղարշ և Որդիներ Կոնցեռն» ՍՊԸ՝ ք. Ծաղկաձոր, Սարալանջի 2/2:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար Հակոբ Ավագյանին՝ ապահովել տնտեսվարողներին սույն որոշման մասին տեղեկացումը:

4. Տնտեսվարողի գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:

5. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ Վահե Ղազարյանին՝ ապահովել սույն որոշման 1-ին և 2-րդ կետերի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

 Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 06/08/20 15:43:58 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

**Տ. ԱՎԻՆՅԱՆ**